

«Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն. ուսուցողական նյութերի ժողովածուն»  
թարգմանվել և հրատարակվել է Հայկական ատլանտյան ասոցիացիայի կողմից:

Ժողովածուն իրենից ներկայացնում է ուսուցողական նյութերի հավաքածու՝ նախատեսված միջնակարգ դպրոցների ուսուցիչների, ուսանողների և բոլոր հետաքրքրված անձանց համար:

Այն վերլուծում է ՆԱՏՕ-ն և տալիս դրա գիտական նկարագիրը՝ հաշվի առնելով միջազգային հարաբերությունների ուսումնասիրություններում կառույցի պատմական և քաղաքական դերակատարումը: Նյութը բավական ընդգրկուն է և մատչելի օգտագործման համար:

Ժողովածուն կազմված է տասներկու մոդուլներից, ինչը հնարավորություն է ընձեռում ուսուցանողներին ընտրել, թե ՆԱՏՕ-ին առնչվող թեմաներից որն է ավելի համապատասխան իրենց լսարանին: Յուրաքանչյուր մոդուլ պարունակում է հիմնական տեղեկություններ ՆԱՏՕ-ի մասին, կազմակերպությանն առնչվող մեկ կամ մի քանի թեմաների խոր վերլուծություններ, ինչպես նաև քաղաքական մոդելներ, որոնք կարելի է կիրառել միջազգային հարաբերություններում ՆԱՏՕ-ի դերն ուսումնասիրելու նպատակով:

Սույն ժողովածուն հնարավորություն կընձեռի միջնակարգ դպրոցների ուսուցիչներին և ուսանողներին բարձրացնել իրազեկվածությունը գործող միջազգային անվտանգության համակարգերի և միջազգային խաղաղության ու անվտանգության կայացման գործընթացում դրանց դերի մասին:

Ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետդեպարտամենտի հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

# Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն.

## Ուսուցողական նյութերի ժողովածու



Հայկական  
ատլանտյան  
ասոցիացիա